ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԶԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՐՍԸ ԱՐԳԵԼՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ

ԶՄԵՌԱՅԻՆ ԻՇԽԱՆ *SALMO ISCHCHAN ISCHCHAN*



Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Տարածված է եղել միայն Սևանա լճում: Հայաստանից դուրս չի հանդիպել: Մինչև XX դարի 70-ական թթ. բազմաքանակ, արդյունագործական նշանակություն ունեցող Սևանի իշխանի ենթատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 200-250 տոննա: Բնակվել և սնվել է առավելապես Փոքր և Մեծ Սևանի առափնյա շրջաններում: Վերջին հավաստի որսը կատարվել է 1982 թ.-ին Մեծ Սևանի Հյուսիսարևելյան ափերի մոտ: Անհետացման հիմնական պատճառներն էին ձվադրավայրերի չորացումը լճի մակարդակի արհեստական իջեցման հետևանքով և որսագողությունը: 1970-1980 թթ.-ին կատարվել են արհեստական վերարտադրման անհաջող փորձեր, սակայն աշխատանքները ընդհատվել են այդ վայրում արտադրողների բացակայության պատճառով: Ներկայում համարվում է աշխարհում անհետացած ձկնատեսակ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻ *SALMO ISCHCHAN GEGARKUNI*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հանդիպում է Սևանա լճում: Մինչև XX դարի 60-ական թթ. եղել է արդյունագործական ձկնորսության հիմնական օբյեկտ: Սևանա լճում բնակվում է ավազաքարային գրունտներով լճի 25-30 մ խորությամբ տեղամասերում: Բազմացման համար մտնում է Սևանա լիճ թափվող Գավառա գետ, Ծակքար, Մաքենիս, Մասրիկ գետերը: Վերջին տարիներին թվաքանակը խիստ կրճատվել է և պահպանվում է հիմնականում արհեստական վերարտադրության հաշվին: Անհետացման հիմնական պատճառներն են ձվադրային գետերի ջրային ռեժիմի փոփոխությունը, աղտոտումը, բնական վերարտադրման պայմանների խախտումը, որսագողությունը լճում և ձվադրային գետերում:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2cd:

Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Անհրաժեշտ է հատուկ վերահսկողություն սահմանել գեղարքունու ապրելավայրերում և ձվադրավայրերում, ինչպես նաև կազմակերպել ձկնաբուծական տնտեսություններից մեծ քանակությամբ ձեռք բերված մանրաձկների բացթողում Սևանա լիճ:

ԱՄԱՌԱՅԻՆ ԻՇԽԱՆ *SALMO ISCHCHAN AESTIVALIS*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հանդիպում է Սևանա լճում: Մինչև XX դարի 70-ական թթ. կեսերը բազմաքանակ, արդյունագործական նշանակություն ունեցող ենթատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 100 տոննա: Բնակվում և սնվում է Սևանա լճում, ձվադրում՝ գետերում, մասամբ՝ լճում: Անհետացման հիմնական պատճառներն են ձվադրման գետերի ծանծաղացումը, ջրի օգտագործումը և աղտոտումը, ինչպես նաև լճային ձվադրավայրերի չորացումը և որսագողությունը:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2cd:

Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Անհրաժեշտ է հատուկ վերահսկողություն սահմանել ամառային իշխանի ապրելավայրերում և ձվադրավայրերում, ինչպես նաև կազմակերպել ձկնաբուծական տնտեսություններից մեծ քանակությամբ ձեռք բերված մանրաձկների բացթողում Սևանա լիճ:

ԲՈՋԱԿ *SALMO ISCHCHAN DANILEWSKII*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Տարածված է եղել միայն Սևանա լճում: Հայաստանից դուրս չի հանդիպել: Մինչև XX դարի 70-ական թվականների կեսերը բազմաքանակ ձկնատեսակ էր, որի տարեկան որսը կազմում էր 100 տոննա: Վերջին հավաստի որսը կատարվել է 1986 թ.-ին:

Անհետացման հիմնական պատճառներն էին լճի մակարդակի արհեստական իջեցման հետևանքով ձվադրավայրերի չորացումը և որսագողությունը: Արհեստական վերարտադրման փորձեր չեն կատարվել: Ներկայում համարվում է աշխարհում անհետացած ձկնատեսակ:

ՍԵՎԱՆԻ ԲԵՂԱՁՈՒԿ *BARBUS GOKTSCHAICUS*



Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Տարածված է Սևանա լճում և նրա որոշ վտակներում, մասնավորապես Արգիճի գետում: Ունի լճային, լճագետային և գետային ձևեր: Նախկինում բազմաքանակ տեսակ էր, որն ուներ արդյունագործական նշանակություն: Տարեկան որսը չէր գերազանցում 20-25 տոննան: Ներկայում պոպուլյացիայի և հատկապես լճային ձևի թվաքանակը խիստ կրճատվել է: Վտանգման հիմնական գործոններն են լճային ձևի հիմնական ապրելավայրերի և ձվադրավայրերի չորացումը, լճի մակարդակի իջեցումը, հիմնական ձվադրային գետերի ջրի աղտոտումը, ձվադրման ժամանակ ոռոգման նպատակով ջրերի օգտագործումը, ինչպես նաև լճում, ձվադրային գետերում և գետային ձևի բնակեցման վայրերում որսագողությունը:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2cd:

Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Անհրաժեշտ է սահմանել բնական վերարտադրության վերահսկողություն և մշակել տեսակի արհեստական վերարտադրության մեթոդները, ինչպես նաև սահմանել պահպանության խիստ ռեժիմ տեսակի ապրելավայրերում:

ՍԵՎԱՆԻ ԿՈՂԱԿ *CAPOETA CAPOETA SEVANGI*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հայաստանում հանդիպում է հիմնականում Սևանա լճում: Ունի լճային, լճագետային և գետային ձևեր: Գետային ձևը պահպանվել է միայն Արգիճի գետի միջին հոսանքում: Նախկինում լճի արդյունագործական նշանակություն ունեցող հիմնական տեսակներից էր, որի որսը տարեկան կազմում էր 300-500 տոննա: Ներկայում պաշարները հյուծված են, թվաքանակը շարունակում է կտրուկ կրճատվել որսագողության, ջրի աղտոտման և բնական վերարտադրության պայմանների վատթարացման՝ ոռոգման նպատակով ձվադրային գետերի ջրերի օգտագործման հետևանքով:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A1cd:

Պահպանվում է «Սևան» ազգային պարկում: Անհրաժեշտ է ձեռնարկել գործուն միջոցառումներ ձվադրային միգրացիաների և թրթուրների վերադարձի ընթացքում տեսակի պահպանման և հիմնական ձվադրային գետերի ջրային ռեժիմի կարգավորման համար:

ՀԱՇԱՄ *LEUCISCUS ASPIUS*



Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հայաստանում հանդիպում է Արաքս, Ախուրյան, Մեծամոր գետերում: Նախկինում լճային ձև է առաջացրել Արփի լճում: Ներկայում Արփի լճի տեղում ջրավազանի կառուցման հետևանքով այդ պոպուլյացիան անհետացել է: Նախընտրում է բնակվել միջին և մեծ արագահոսությամբ գետերի ստվարաշերտում: Նախկինում եղել է բավականին տարածված տեսակ: Գետերի ջրային ռեժիմի փոփոխումը, գետերի ջրի չկարգավորվող օգտագործման հետևանքով աղտոտումը, բնական վերարտադրության պայմանների վատթարացումը, որսագողությունը, ինչպես նաև գետերի վրա հիդրոտեխնիկական կառույցները հանգեցրել են հաշամի թվաքանակի և արեալի կրճատման:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

Հայաստանի Հանրապետությունում հաշամի պահպանության միջոցառումներ մինչ այժմ չեն իրականացվել: Այդ առումով գետերի վրա գտնվող հիդրոտեխնիկական կառույցներում անհրաժեշտ է նախատեսել ձկնանցարաններ և մաքրման սարքավորումներ, ինչպես նաև սահմանել պահպանության ռեժիմ բոլոր ապրելավայրերում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄՐԱԿՆ *RUTILUS RUTILUS SCHELKOVNIKOVI*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հայաստանում հանդիպում է Արարատյան դաշտավայրում՝ Արաքս, Մեծամոր գետերում ու նրանց հետ հաղորդակցվող ջրանցքներում ու լճակներում: Բնակեցնում է գետերի և ջրանցքների դանդաղահոս տեղամասերը, ջրային բուսականության մացառուտները: Նախկինում բազմաքանակ ձկնատեսակ էր, որը ձվադրման շրջանում առաջացնում էր մեծ կուտակումներ: Ներկայում քանակը նվազել է գետերի ջրային ռեժիմի փոփոխման, ջրերի չկարգավորվող օգտագործման, ինչպես նաև միջավայրի աղտոտման, բնական վերարտադրության պայմանների խանգարմանը ինվազիոն ձկնատեսակների մրցակցային ազդեցության, որսագողության հետևանքով:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab(iii)+2ab(iii):

Հայաստանի Հանրապետությունում հայկական կարմրակնի պահպանության միջոցառումներ մինչ այժմ չեն իրականացվել: Այդ առումով անհրաժեշտ է վերականգնել այս ձկնատեսակի ապրելավայրերը և սահմանել դրանց պահպանության հատուկ ռեժիմ:

ԿՈՒՐԻ ՔԱՌԹԱԿ *ROMANOGOBIO MACROPTERUS*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հայաստանում հանդիպում է Արաքս, Մեծամոր գետերում, Հրազդան գետի ստորին հոսանքում: Բնակեցնում է գետերի դանդաղահոս մերձհատակային տեղամասերը:

Այս ձկնատեսակը Հայաստանի տարածքում գործնականում ուսումնասիրված չէ և շատ քիչ բան է հայտնի նրա կենսաբանական առանձնահատկությունների մասին:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

Հայաստանի Հանրապետությունում Կուրի քառթակի պահպանության միջոցառումներ մինչ այժմ չեն իրականացվել: Այդ առումով անհրաժեշտ է սահմանել այս ձկնատեսակի պահպանության հատուկ ռեժիմ:

ՈՍԿԵԳՈՒՅՆ ԾԱԿԱՆ *SABANEJEWIA AURATA*

Ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում: Հայաստանում հանդիպում է Արաքս, Ախուրյան, Աղստև գետերում: Բնակեցնում է գետերի դանդաղահոս մերձհատակային տեղամասերը:

Այս ձկնատեսակը Հայաստանի տարածքում գործնականում ուսումնասիրված չէ և շատ քիչ բան է հայտնի նրա կենսաբանական առանձնահատկությունների մասին:

Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD:

Հայաստանի Հանրապետությունում ոսկեգույն ծականի պահպանության միջոցառումներ մինչ այժմ չեն իրականացվել: Այդ առումով անհրաժեշտ է սահմանել այս ձկնատեսակի պահպանության հատուկ ռեժիմ:

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՊԱՀՊԱՆԵԼ

Հայաստանի գետերում, լճերում ու ջրամբարներում բնակվող ձկնատեսակները պատկանում են ոսկրային ձկների դասին (Osteichthyes): Այս դասն իր տեսակային կազմով ողնաշարավոր կենդանիների ամենաբազմաքանակ խումբն է, որն իր մեջ ներառում է ավելի քան 32000 ժամանակակից տեսակ: Հարկ է նշել, որ այսքան մեծ բազմազանություն ունեցող կենդանիների խումբը Հայաստանի ջրերում ներկայացված է համեմատաբար սակավաթիվ՝ շուրջ 40 տեսակով: Բացի դրանից, մեր երկրի ձկնային տնտեսություններում բուծվում են նաև այլ ձկնատեսակներ, որոնք այդ տնտեսություններից պատահաբար կարող են հայտնվել բնական ջրերում: Արդյունքում Հայաստանի ջրային տարածքներում ներկայում հանդիպում է ավելի քան 50 ձկնատեսակ, որոնք ընդգրկված են հետևյալ կարգերում.

Սաղմոնակերպերի (Salmoniformes) կարգ, որի ներկայացուցիչներն են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, Սևանի իշխանը *Salmo ischchan* իր չորս ենթատեսակներով, սիգը *Coregonus lavaretus*, ծիածանախայտը *Oncorhynchus mykiss*: Սիգը կլիմայավարժեցվել է Սևանա լճում, որտեղ ներկայում ամենաբազմաքանակ ձկնատեսակն է: Ծիածանախայտը բուծվում է ֆորելային ձկնային տնտեսություններում, որտեղից հաճախ հայտնվում է բնության մեջ:

Կարմրախայտ

Սիգ

Ծածանակերպերի (Cypriniformes) կարգ, որի ներկայացուցիչներն են՝ ծածանը *Cyprinus carpio*, կողակը *Capoeta capoeta*, կապուտը *Capoeta kaput*, ճանարը *Luciobarbus capito*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*, Սևանի բեղաձուկը *Barbus goktschaicus*, մուրծան *Luciobarbus mursa*, գուստերան *Blicca bjoerkna*, բրամը *Abramis brama*, հայկական կարմրակնը *Rutilus rutilus schelkovnikovi*, արևելյան թեփուղը *Squalius orientalis*, Կուրի ենթաբերանը *Chondrostoma cyri*, հաշամը *Leuciscus aspius*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, անդրկովկասյան սպիտակաձուկը *Alburnus hohenackeri*, Կուրի սպիտակաձուկը *Alburnus filippii*, մանրաթեփուկը *Acanthabrama microlepis*, քառթակը *Gobio artvinicus*, Կուրի քառթակը *Romaniogobio macropterus*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*, դառնաձուկը *Rhodeus amarus*, արծաթաձուկը *Leucaspius delineatus*, ամուրյան նրբաձուկը *Pseudorasbora parva*, սպիտակ ամուրը *Ctenopharyngodon idella*, խայտաբղետ հաստաճակատը *Hypophthalmichthys nobilis*, սպիտակ հաստաճակատը *Hypophthalmichthys molitrix*, Դերժավինի ծականը *Cobitis derzhavini*, ոսկեգույն ծականը *Sabanejewia aurata*, Վեյսելի լերկաձուկը *Oxynoemacheilus veyselorum*, Կուրի լերկաձուկը *Oxynoemacheilus brandti*, Բերգի լերկաձուկը *Oxynoemacheilus bergianus*:
Ծածանակերպերի առանձին տեսակներ, ինչպիսիք են սպիտակ և խայտաբղետ հաստաճակատները, սպիտակ ամուրը, արծաթափայլ կարասը, ամուրյան նրբաձուկը, Հայաստանի բնիկ ձկներ չեն և այստեղ են հայտնվել ձկնային տնտեսություններ ներմուծելու պատճառով:

Ծածան

Ճանար

Մուրծի

Արևելյան թեփուղ

Գուստերա

Սպիտակ ամուր

Լոքոյակերպերի կարգ (Siluriformes), որի միակ ներկայացուցիչն է սովորական լոքոն *Silurus glanis*:

Սովորական լոքո

Ցլիկաձկնակերպերի կարգ (Gobiiformes), որի ներկայացուցիչներն են՝ կովկասյան ցլիկաձուկը *Knipowitschia caucasica*, Կուրի ցլիկաձուկը *Ponticola cyrius*, ավազային ցլիկաձուկը *Neogobius fluviatilis*:

Կովկասյան ցլիկաձուկ

Պերկեսակերպերի կարգ (Perciformes), որի ներկայացուցիչներն են սովորական պերկեսը *Perca fluviatilis*, գայլաձկնանման պերկեսը *Sander lucioperca*:

Գայլաձկնանման պերկես

Ծածանատամնավորակերպերի կարգ (Cyprinidontiformes), որի միակ ներկայացուցիչը կլիմայավարժեցված Հոլբրուկի գամբուզիան է *Gambusia holbrooki*:

Գամբուզիա

Թառափակերպերի (Acipenseriformes) կարգ, որի ներկայացուցիչներն են՝ ստերլյադը *Acipenser ruthenus*, բելուգան *Huso huso*, սեպադունչ թառափը *Acipenser nudiventris*, ռուսական թառափը *Acipenser gueldenstaedtii*, սիբիրյան թառափը *Acipenser baerii*, սևրյուգան *Acipenser stellatus*: Վերոնշյալ տեսակները բուծվում են ձկնային տնտեսություններում և Հայաստանի բնիկ ձկներ չեն:

Ստերլյադ

Բելուգա

Օձաձկնակերպերի կարգ (Anguilliformes), որի միակ ներկայացուցիչը ձկնային տնտեսություններում բուծվող սովորական օձաձուկն է *Anguilla anguilla*:

Սովորական օձաձուկ

Վերոնշյալ ձկներից Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված են 7 տեսակ, որոնցից մեկը՝ իշխանը, ներկայացված է 4՝ 2 բնաջնջված (բոջակ և ձմեռային իշխան) և 2 ժամանակակից (գեղարքունի, ամառային իշխան) ենթատեսակներով:

Կարմիր գիրքը բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների հաշվառման պաշտոնական տեղեկատու է, որը փաստացի տվյալներ է պարունակում տարբեր տեսակների կենսաբանության, թվաքանակի, տարածման վայրերի, ձևաբանության վերաբերյալ: Նշվում են նաև թվաքանակի կտրուկ նվազման հիմնական պատճառները: Հայտնի են Կարմիր գրքի միջազգային և ազգային տարբերակները: Կարմիր գիրքը կազմվում է կենսաբազմազանության պետական հաշվառման արդյունքների հիման վրա:

Երևան - 2021